



ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, 11 ՌԵԿՏԵՄԲԵՐ, 2017

ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՐԹՔ

(միասնաբար արտասանուած)

Իմաստութիւն Հօր Յիսուս, ԿՈՒՐ ԻՆՃ Իմաստութիւն ՎԲԱՐԻՍ ԽՈՐԻԵԼ ԵՆ ԽՍՍԵԼ ԵՆ գործել առաջի քո լամենայն ժամ. Ի չար խորհրդոց, Ի բանից եւ Ի գործոց փրկեա վիս. եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ բազմամեղիս: Ամէն:

ՍԱՂՄՈՍ 121

ԱՍՏՈՒԱԾ ՄԵՐ ՊԱՀԱՊԱՆԸ

Աչքերս դէպի լեռները կը բարձրացնեմ,
ուրկէ օգնութիւն պիտի գայ ինձի:
Օգնութիւնս Տիրոջմէն է որ պիտի գայ,
որ արարիչն է երկինքին ու երկրին:
Անիկա թոյլ պիտի չտայ որ փորձանքի մէջ իյնաս,
որովհետեւ քու անքուն Պահապանդ է ան:
Արդարեւ ան չի՛ ննջեր եւ չի՛ քնանար,
իր ժողովուրդին Պահապանն է ան:
Տերը քու պահապանդ է,
քու հովանի պաշտպանդ է, կողքիդ կանգնած:
Ո՛չ ցերեկ ատեն արեգակը քեզի վնաս պիտի տայ,
ո՛չ ալ լուսինը՝ գիշեր ատեն:
Տերը ինք քեզ պիտի պահէ ամէն չարիքէ,
եւ քեզ պիտի պահպանէ:
Տունէդ դուրս ըլլաս թէ ներս՝ Տերը ինք քեզ պիտի պաշտպանէ,
այժմէն մինչեւ յաւիտեան: Ամէն:

ՇԱՐՄԱՆ - ԱՐԹՔ

Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:
Վմենասուրբ Երրորդութիւն, տուր աշխարհիս խաղաղութիւն:
Եւ Հիւանդաց բժշկութիւն, ննջեցելոց արքայութիւն:
Արի Աստուած Հարցն մերոց, որ ապաւէն ես նեղելոց:
Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա:

Պահապան ամենայնի Քրիստոս,
աջ քո հովանի լիցի ի վերայ իմ՝ ի տուէ եւ ի գիշերի,
ի նստիլ ի տան, ի գնալ ի նանապարհ,
ի ննջել եւ ի յառնել, զի մի երբեք սասանեցայց.
եւ ողորմեա՛ քո արարածոց եւ ինձ բազմամեղիս:

ՕՐՈՒՄՆ ՆԻՒԹԸ



ՊԵՏՐՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԸՆԴՀԱՆՐԱՊԵՏՆԵՆ ՆԱՄԱԿԷՆ

5:8-14

ԽՈՆԱՐՀՈՒԹԵԱՆ ԵՒ ԱՐԴԱՐՈՒԹԵԱՆ ՅՈՐՈՐ (5:8-11)

Պեպրոս Առաքեալ խօսել է երբ հոգսերու մասին, որ այդ բոլորը Աստուծոյ ձգելու, որովհետեւ Ինք կը հոգայ մեր մասին, բայց այդ բոլորը երբ մենք Աստուծոյ հօր ձեռքին փակ կը խոնարհինք: Այս բացատրութենէն յետոյ Առաքեալը կ'անցնի խօսելու արթուն եւ պարտաւար ըլլալու, ինչո՞ւ, որովհետեւ մեր թշնամին՝ Սաբանան առիծի պէս մոնչելով կը շրջի կլլելու համար մէկը կը փնտրէ (8 հմր): Պեպրոս Առաքեալ նախ յարակ կ'ընէ մեր թշնամիին գոյութիւնը: Քրիստոնեայ հաւաքացեալը թշնամի ունի: Ինչպէս Պօղոս Առաքեալ եւս պիտի ըսէ. մեր թշնամին որ աներեւոյթ է, անոր դէմ պարտազմելու համար Աստուծոյ սպառազինութիւնը պէտք է ունենալ եւ օգտագործել (Եփես 6:10-20): Որովհետեւ «**մեր պարտազմը մարդոց դէմ չէ, այլ՝ երկինքի փակ գրնուող չար ոգիներուն, իշխանութիւններուն եւ պետութիւններուն, այս խաւար աշխարհի փրակալներուն դէմ**» (12 հմր): Այնքան արեւ, որ Աստուծոյ ողորմութեամբ չենք ազարագրուած, ուրեմն փակաւին կ'ապրինք չարին իշխանութեան փակ, այլ խօսքով՝ խաւարի մէջ, ուրկէ մեզ Քրիստոս Իր յոյսին կը բերէ, երբ հաւաքքով զԻնք կ'ընդունինք ու կը ճանչնանք որպէս Տէր եւ փրկիչ: Ուրեմն, Պեպրոս Առաքեալ ցոյց կու տայ, որ Չարը ուրիշ մէկը չէ եթէ ոչ մեր թշնամին, այս է իր ինքնութիւնը: Ի՞նչ կ'ընէ. կը շրջի: Նոյն վիճակի մասին կը կարդանք Յոբի գրքի մէջ երբ առիթով մը Տէրը կ'ըսէ Սաբանային. «ուրկէ՞ կու գաս»: Ան ալ կը պարտաւարանէ ըսելով. «Երկրի վրայ շրջելն ու անոր վրայ պարտելն» (Յոբ 1:7): Ի՞նչ ընելու մէկը կլլելու: Մեզ խանգարելու, մեր մարտերը պղտորելու: Միւս կողմէ, Սաբանան, ոչ միայն առիծի պէս կը մոնչէ, այլ նաեւ՝ լուսաւոր հրեշտակի կերպարանքով կը ներկայանայ (Բ Կորնթ 11:13): Չարին ինքնութիւնը, գործելակերպը, ու անոր վախճանը (Յայտն 12:9, Յուդա 6հմր, Եբր 2:14): Ուշադիր պէտք է ըլլալ երկու ծայրայեղութիւններէ, մէկը ամէն ինչ չարին վերագրելու, իսկ միւսը՝ ընդհանրապէս չարին գոյութիւնը մերժելու:

Երկրորդ, ցոյց կու տայ թէ ինչ ընենք մեր թշնամիին դէմ: Արթուն եւ պարտաւար ըլլալ ենք: Անոր համար ալ զգոյշ ըլլանք ինչպէս հասկնալու 7 հմր: Որովհետեւ եթէ Պեպրոս Առաքեալ թելադրեց ըսելու համար թէ «**Ձեր հոգերը Աստուծոյ ձգեցէք, որովհետեւ Ինք կը հոգայ ձեր մասին**» բացատրութեամբ, սա չի նշանակեր անարարքեր մնալու, ծոյլ, այլ՝ ճիշդ անոր համար իր շարունակութիւնը մտքին կու գայ ըսելու թէ արթուն եւ պարտաւար պէտք է ըլլալ, մանաւանդ երբ թշնամին մը ունինք, որ կը շրջի մոնչելով առիծի մը պէս եւ կլլելու մէկը կը փնտրէ: Երկրորդ, դէմ դնել Չարին, եւ ոչ թէ Չարէն փախուստ փայ: Երրորդ, ի մտի ունենալ, որ միայն մենք չենք որ այս պարտազմին մէջն ենք, այլ նաեւ նոյն չարչարանքներէն կ'անցնին մեր քոյրերն ու եղբայրները:

Պեպրոս Առաքեալ կ'անցնի մէկ այլ ուրիշ նիւթի մը, որ այս անգամ ապահովութեան մասին է: Տէրը, «**որ բոլոր շնորհներու պարգեւիչն է, որ Քրիստոս Յիսուսի միջոցաւ իր յաւիտենական փառքին կանչեց մեզ, նկարի ունենալով որ չափով մը մասնակից եղանք Յիսուսի չարչարանքներուն՝ պիտի կազդուրէ, զօրացնէ եւ ամուր հիմներու վրայ հաստատէ մեզ**» (10 հմր): Այս արտայայտութիւնը կարծէք այնպէս կը թուի, որ երբեք ալ նեղութիւն պիտի չունենանք, եւ ամէն ինչով ապահով պիտի ըլլանք, որովհետեւ Պեպրոս Առաքեալ ապահովութեան մասին կը խօսի: Որովհետեւ Աստուծոյ կը պարկանի իշխանութիւնն ու փառքը, ուրեմն Ինք կրնայ մեզ Իր զօրութեամբ հաւաքի կեանքին մէջ հաստատուն պահել:

Պեպրոս Առաքեալ կու գայ ցոյց տալու նաեւ Աստուծոյ ինքնութիւնը, որ բոլոր շնորհներու պարգեւիչն է: Հոն ուր որ պարտիժի արժանի ենք, Ինք շնորհներ կու տայ: Ուր մահուան արժանի ենք, Ինք կեանք կը շնորհէ: Այս բոլորը ինչ որ Յիսուս Քրիստոս կարարեց Գողգոթայի վրայ խաչափայտին վրայ Իր պարտաբազումով: Այս բոլորը ուրիշ բան չեն եթէ ոչ Աստուծոյ ողորմութիւնը (Ա Պեպ 1:3): Աստուած որ մեզ կանչեց Իր յաւիտենական փառքին, որուն նախաճաշակը կու տայ Աստուած: Այդ փառքը ուրիշ բան չէ եթէ ոչ Աստուծոյ յաւիտենական ներկայութիւնը:

Աստուած պիտի կազդուրէ, որ կը նշանակէ փշրուածը պիտի վերակառուցէ: Աստուած պիտի զօրացնէ եւ ամուր հիմներու վրայ հաստատէ: Որովհետեւ Իրն են իշխանութիւնն ու պարտիւր: ԱՄԷՆ: Այո, Իրն են: Անոր համար ալ վստահութիւնը պէտք է ունենանք, որ հակառակ մեր կրած նեղութիւններուն, որոնք միայն ժամանակաւոր են, Ինք՝ Տէրը մեզ պիտի կազդուրէ, զօրացնէ եւ ամուր հիմներու վրայ պիտի հաստատէ մեզ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆ ԵՒ ՎԵՐՉԻՆ ՅՈՐԴՈՐՆԵՐ (5:12-14)

Կարծեք թե 11 համարով Պեպրոս Առաքեալ աւարտած ըլլար իր նամակը, բայց յետ գրութիւն մը կայ, որ 12-14 հմրներն են: Այս յետ գրութիւնը գրուած ըլլայ Սիդուանոսի ձեռքով, անձ մը, որ Պօղոս Առաքեալի երկրորդ առաքելական ճամբորդութեան ընթացքին միասին էր, հրեայ եւ հռոմայեցի քաղաքացի: Անոր մասին կը կարդանք Գործք 15-16 գլխներուն մէջ: Պեպրոս Առաքեալ զինք կը ներկայացնէ որպէս դպիր, բայց նաեւ հաւաքարիմ գործակից: Իսկ րեղը, վայրը, Բաբելոն, որ խորհրդանշկանօրէն կը նշանակէ Հռոմը: Մարկոսը որպէս Պեպրոս Առաքեալի հոգեւոր զաւակը, անոր մասին եւս կը կարդանք Գործք Առաքելոց գիրքին մէջ, ինչպէս նաեւ Պօղոս Առաքեալի նամակներուն մէջ:

Ահա այս յետ գրութեամբ Պեպրոս Առաքեալ կու գայ ըսելու եւ կարեւորութեամբ շեշտելու նախ որ այս հակիրճ նամակը հաւաքացեալները քաջալերելու համար է եւ վստահեցնելու, թէ Քրիստոսի չարչարակից ըլլալը ուրիշ բան չէ եթէ ոչ Աստուծմէ փրուած շնորհք: Կարելի չէ Աստուծոյ մասին խօսիլ, առանց նկատի ունենալու այդ շնորհք, որ Աստուած Ինք փութիչն է: Կարելի չէ շնորհքի մասին մտածել առանց նկատի ունենալու այդ շնորհքին փութիչը: Ինչ է այդ շնորհքը: Ինչ որ Աստուած Ինք ըրաւ մեզի համար: Մինչեւ այն ատեն այս շնորհքին փորձառութիւն չունինք, որ անով մեր կեանքերը կերպարանափոխուած են, դժուար թէ կարենանք այդ շնորհքին բարի լուրը ուրիշին փոխանցելու:

Երկրորդ կարեւոր երեսը քրիստոնէական հաւաքի իսկութեան սերը: Քրիստոս պիտի ըսէ. «Միրեցէք իրար, ինչպէս ես ձեզ սիրեցի»: Երրորդ, խաղաղութիւն, Քրիստոսի, Աստուծոյ խաղաղութիւնը ձեր բոլորին հետ: Խաղաղութիւն նախ Աստուծոյ հետ, հաշտ ըլլալու, եւ առանց Քրիստոսի կարելի չէ ունենալ այդ խաղաղութիւնը: Այս խաղաղութիւնը կը վայելեն անոնք, որոնք Քրիստոսի մէջ են, Քրիստոսի միացած են: